



ԱՅՀԱՆ ԱՐԵԴԱ. ԳԱԼՈՒՄԴՈՒԹՅԱՆ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԽՈՍ

 աղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Հայաստանյաց Աստվածական եկեղեցու կարկառուն և մեծավաստակ դեմքերից մեկն է Հանգիսացի 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբներում որոշ մատենագիր, աստվածարան, վարչական և հայրենական:

Այս հոգիածով մենք մտազիր չենք Օրմանյան պատրիարքի կենսագրության, պատմագիտական ու բանասիրական և կամ եկեղեցական բազմապիսի գործունեության մասին խոսել և գրել, այլ ցանկանում ենք տալ ականավոր եկեղեցականի մեկ տարվա՝ 1888 թվականի ընթացքում Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգենոր ծեմարանում աստվածարանություն դասավանդելու պատմությունը, նրա յարերաց ազգեցությունը իր աշակերտների վրա՝ նրանց կուսակրծն հոգեռական զառնալու գործում և մանավանդ նրա հեռացումը ցարական կառավարության միջոցով էջմիածնից և առասարակ Ռուսաստանից:

Պատմական նորահայտ փաստերը խոսում են այն մասին, որ Օրմանյանին ցարական կառավարությունը բռնի կերպով հեռացրել է Գևորգյան ծեմարանից:

Լենինգրադի պետական կենտրոնական ուսաժամանական արխիվի № 821 փոստում գրանդում են Օրմանյան սրբազնի հեռացման մասին ցարական կառավարության պաշտոնական փաստաթղթերը, որոնք վկայում են, թե ինչո՞ւ կառավարությունը ցանկանում էր անպատճառ հեռացնել Օրմանյանին ծեմարանից:

Օրմանյանին հեռացնելու համար Կովկասի բաղարական բաժնի պետ իշխան Գոնդուկով-

նորսակովը 1888 թվականի ապրիլի 20-ին ներքին գործերի մինիստր կոմս Դմիտրի Անդրեևիչ Տոլստոյին ուղարձ № 187 գաղանի գրաթիւմը մանրամասն շարադրում է Օրմանյանին հեռացնելու պատճառները:

Հրատարակության ենք տալիս իշխան Գոնդուկով-Կորսակովի 1888 թիվ մարտի 22-ի № 2872 նամակը՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա.-ին:

Օրմանյանը այս հարցի կապակցությամբ գրում է, «Հունիսի 27-ին պլաստիր պաշտոնյամբ հասավ Փետերուորդե, Օրմանյանի և իրեն մտելիմ և կառավարության անհամակիր կարծիք ուժանց հեռացումը պահանջելու համար»: Այդ պաշտոնյան գաղտնի խորհրդական Գիրսն էր, որին գործուղել էր ներքին գործերի մինիստրությունը:

1874 թվականին Ս. Էջմիածնում բացվեց Գևորգյան ծեմարանը: Գևորգ Գ կաթողիկոսի ամենանշանավոր գործերից մեկն էր այդ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հոգենոր բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալը հրատապ խնդիր էր: Այդ տիպի դարպաց ունենալու ուղղությամբ աշխատանք կատարել էր նախորդ կաթողիկոսները, բայց նարակար չէր եղել զրական արդյունքի հասնել:

Գևորգյան ծեմարանը շատ կարև ժամանակամիջոցում բազմաթիվ աշակերտներ է ունենում, սակայն, ինչպես Օրմանյանն է ասում, ծեմարանը «յուր իսկուկան նպատակին չծառայեց, որ էր ֆառանգավորաց ձեմարանից»:

մարան ըլլալ և ուսումնական ու գարգացյալ հոգեռականներ պատրաստել, զի հին ժառանգավորաց Վարժարանը, որ ճեմարանի բացման ատեն առժամապես պահեցավ, 1882-ին զոցվեցավ, բայց Գեորգի ժամանակ և ոչ մի շրջանավարտ կամ աշակերտ հոգեռականության հետեւեցավ²:

Գեորգյան ճեմարանը, չնայած իր դոյլության առաջին օրից շավից կուսակրոն հոգեռականներ, սակայն նա հետապայտմայ կուպարայի պատմության մեջ կատարել է պատվավոր գեր՝ ապավի հայտնեների, պատմաբանների, գրողների գեղեցիկ բույլ, ինչպես Ս. Մալխասյանը, Մ. Արեգյանը, Ավետիք Խաչակրյանը, Գերենիկ Գեմիքյանը և ուրիշները: Ճեմարանը տվել է նաև իրենց կոչմանը գիտակից հոգեռականների մի պատկառելի սերունդ, որի ներկայացուցիչներն էին հանգիսանում երշանկաշշատեկ Գեորգ Զ Կաթողիկոսը, Կարապետ Յեր-Մկրտչյան զիտնական եպիսկոպոսը, Գարեգին Կաթողիկոս Հովհանիսյանը, Կոմիտաս վարդապետը և ուրիշներ:

Ճեմարանը սակայն իր իսկական գերի մեջ մտավ և սկսեց ծառայել իր նպատակին Մակար Ա կաթողիկոսի օրով, երբ լսարանական բաժնում Օրմանյանի ջանքերով սկսեցին դասավանդվել աստվածարանական դիտելիքներ և ուսանողները պատրաստվեցին հոգեռականության համար:

Մինչև Օրմանյանի զալը ճեմարանում շկար աստվածարանությունը՝ Դեռևս 1867 թվին Խորեն հպիսկոպոս Գալֆայանը, երբ էջմիածին էր եկել հպիսկոպոսանալու, Գեորգ Պ-ին խորը էր տվել, որ բացվելիք ճեմարանում առնվազն երեք տարի կասավանդիք, Սակայն Կաթողիկոսի հետ Պետերուուրդ երթակ ետքը պատմանը մը առժամյա բացակայության արտնություն ստանալով, և անդամ մը Կոստանդնովոպոլիս Երթալեն ետքը այլևս չվերապարձավ³:

Գալֆայանի շգալու հետեւանքով նորաբաց ճեմարանի զեկավարման գործը հանձնվում է Գարբիել արքեպիսկոպոս Արվազյանին, որը այնքան էլ ճեմարանով չէր մտահոգված, բանի որ նա Վրաստանի առաջնորդությունը պայման էր զրել: Նա Թիֆլիս մնալով էջմիածնի ճեմարանն է սկսում զեկավարել տեղեկատունների, ծանոթությունների և հրամանների միջոցով, դրա հետեւանքն է լինում 1878 թվին ճեմարանի երրորդ դասարանի բնրուսացումը և ուսանողների խմբավիճակը:

2. Նույն տեղում, էջ 4242:

3. Նույն տեղում:

Ճեմարանի ուսումնական ծրագիրը Մուրատյան և Հայկավյան վարժարանների ծրագրի նմանությամբ էր կազմված, ավելի ընդհանուր, բան եկեղեցական ուսման ուղղությամբ, այնպես որ ճեմարանը բալորովին ճրի և աղաս միջնակարգ ուսումնարանի գեր է առնում: Օրմանյան սրբազնը այդ մասին գրել է. «Ա զարմանալու չէ, եթե ձրի երկրորդպահան ուսումնաներու և աղատարար գուրս ելլալու պայմաններու ներքեւ աշկերտաց թիվը յուրավ և արագալացան անցեցավ»⁴:

Գեորգ Գ-ի օրով ճեմարանը ոչ մի հոգեռական շտվեց և այդպիս շարունակվեց մոտավորապես 18 տարի:

Մակար կաթողիկոսը ճեմարանի հոգեռը կրթության մակարպակի բարձրացմանը և զարգացմանը հատուկ ուշադրություն է զարձնում: Իր կաթողիկոսության առաջին իսկ տարվանից, Մակար կաթողիկոսը Ռուսաստանում գտնված անվանի գասափաններու հարավիրել էր ճեմարան դասավանդելու համար: Դրանք էին Արշակ Նահապետյանը (Հետապայտման հպիսկոպոս), Մանդինյանը, Կարպետ Կոստանդնուր, Սարգիս Գարբիելյանը, Ստեփան Պալասանյանը, Մկրտիչ Պալյանը և ուրիշներ, որոնք նահապետյանի տիւչության օրով ճոխացրել էին ճեմարանը:

Այս գասափանները, սակայն, բոլորն էլ սրբաբին գիտությունների մասնագիտություն և կրթություն չունեին: Ճեմարանին պակասում էր աստվածարանության գասափանը: Ինչպես երեսում է ճեմարանի մինչ 1888 թվի վերատեսուչների զեկուցազրերից և տեղեկագրերից, հազիր թե Ս. Գրբի պատմությունն էր գասափանգել գասարաններում, իսկ լսարաններում կրոնական առարկաներ համարյա չեն եղել: Այսպիսով այս լորջ հարցը կաթողիկոսի ուշադրությանն են ներկայացնեմ: Մակար կաթողիկոսը հանձնարարում է ճեմարանի վարչությանը՝ կարող մի անձնավորություն գտնել և առաջարկել, որպեսզի ինքն էլ գործի հրավիրի նրան:

Ուսուցչական խորհուրդը երկար վարանումներից հետո տևառէ Աբշակ Նահապետյանի թելապությամբ առաջարկում է Օրմանյանին, որի հետ ծանոթացել էր Կարբինի Սանասարյան վարժարանի հիմնադրման ժամանակ: Օրմանյան այդ միջոցին Կարբինի թիմի առաջնորդն էր և բարերախուրար Ս. էջմիածին պետք էր գար համակուրուսանալու: 1886 թվին Օրմանյանին առաջարկում է թողնել Կարբինի առաջնորդությունը և մնալ էջմիածնում որպես ճեմարանի գասափան: «Նա, — գրում է, Օրմանյան

4. Նույն տեղում:

իր մասին, — առաջարկին հետ ի սրտե համակիւով մեկտեղ, հարկ կսեպէր զիտել աւալ, ... առանց վիճակին զիտակցության և առանց պատրիարքարանի հավանաթիւան, այսպիսի հրաժարական մը իրեն անտեղի կերեար, ուստի գործը կհանձներ կաթողիկոսին բարձր և ազատ անօրինաթյան»⁵, երկար բանակցություններից հետո կաթողիկոսի և պատրիարքի միջև, 1887 թվին գրում է Մակար կաթողիկոսի հրաժարական կոնդակը: Երբ Օրմանյանն ստանում է այդ կոնդակը, ներկայացնում է իր հրաժարականը և անմիջապես մեկնում է Ա. Էջմիածին ու նույն տարվա սեպական բրերին ստանում ճնշմարանի աստվածարանական ճյուղի դասախոսությունը երեք լսարաններում:

Անտեղի չենք համարում վերատեսուչ Ա. Նահապետյանի 1887—1888 ուսումնական տարիս տեղեկագրից աւալ զնաշատականը Օրմանյանի մասին, ինչպես նաև նրա ավանդած դասերի թիվը: Նկարագրելով դասախոսների և դասերի բաժանումն ըստ դասարանների և լսարանների, նաև ամիսացված աստվածարաննության առարկան, վերատեսուչ Նահապետյանը գրում է. «Բակ լսարանների վերաբերությամբ ծրագիրը նշանավոր փոփոխության ննիթարկվեցավ, որովհետեւ գերաշնորհ Տ. Մաղարիս հպիսիոպոս Օրմանյանը աստվածարանական դիտությանց ուսուցիչ և միանգամայն քարոզիչ նշանակվեցավ ճնշմարանում»⁶:

Վերատեսուչ Նահապետյանի կազմած և «Արարատ»-ում հրատարակած տեղեկագիրդասացուցակից տալիս ենք նաև Օրմանյան սրբազնի պարապած դասերի ցուցակը.

«Տ. Մաղարիս եպիսկոպոս

ունեցել է | պակաս է | ավելորդ | բնդամենք

488

2

490^{1/2}

Օրմանյան սրբազնը դասավանդել է հետեւյալ առարկաները հետեւյալ լսարաններում:

ա. Աստվածարանական (բնական, տեսական և բարոյական)

Ա. լսարան 2 դաս

Բ. 2 3 2

Գ. 2 5 2

բ. Թիմրասացություն

Ա. լսարան 2 դաս

Բ. 2 2 2

Գ. 2 2 2

գ. Թագաւորություն Ա. Գրոց

Ա. Բ Գ լսարանը 2 դաս (միացւալ)

դ. Մեկնություն Ա. Գրոց

Գ լսարան 2 դաս

20^{1/2}

Ինչպես վերեւում շեշտեցինք, ճեմարանը մոտավորապես 18 տարի շեր տվել հոգեութականներ, Կաթողիկոսը և ճեմարանի վարչությունը միշտ շահացել են համոզել ճեմարանավարաններին, որ հոգեոր կոչում ընդունեն, սակայն ոչ որ շեր ընդառաջում եղած Շարիներին: Տարիներին անցնում էին, ին ժառանգավորաց գպրոցը չկար, նոր միարան շեր տալիս, ամբողջ այդ 18 տարվա ընթացքում դրսից միայն մեկ—երկու պատահական մարդիկ են ամելանում Մայք Աթոռի միարանական շարքերում: Նոր, երիտասարդ, կրթություն ստացած հոգեորականների պահանջը օրավոր զգալի էր դառնում, իսկ ճեմարանը ամուս էր մնում: Երշանկահիշատակ Մակար կաթողիկոսն ու ճեմարանի վարչությունը մեծ հոգաբեր մեջ էին: Մյուս կողմից ցարական կառավարությունը պահանջում էր ճեմարանի ծրագիրն ու կանոնադրությունը, հարցապընդում անելով, թե այդ ի՞նչ հոգեոր ճեմարան է, որ տարիների ընթացքում ոչ մի հոգեորական չի տալիս: Ճեմարանավարուներն ևս իրենց ուղղագած հորդորների գեմ մեծ մասամբ այն էին առարկում, թե իրենց պատրաստված շեն զգում հոգեոր կոշման համար, մանկավարժություն, զրականություն էին ուսեւ: Ավարտողները կարող էին ուսուցիչ լինել, բայց կրոնական, եկեղեցական գիտելիքները այնքան թույլ էին ավանդվել, որ ձգում շեր առաջացել իրենց մեջ եկեղեցական ասպարեզն ընտրելու և ոչ էլ կարողություն զարդարել այդ ասպարեզում գործելու եւ առաջդ պակասը լրացրեց և վերոհիշյալ զորել առարկությունը մեջտեղից վերցրեց, զանազան ոժքարություններ հաղթահարելով, աստվածարանական առարկաների հրավերված դասախոս, իր ժամանակի հայ եկեղեցականության մեջ ամենից ավելի հայտնի և գիտում ու նվիրված աստվածարան եկեղեցականը:

Օրմանյան սրբազնի ուղագրությունը և հունադը լսարանների, հատկապես Գ լսարա-

5. «Ազգապատում», Հայոր Գ, էջ 458:

6. Նույն տեղում, էջ 624:

7. Նույն տեղում, էջ 621—622:

նի վրա է կենտրոնանում։ Նա կարողանում է ձեմարանականներին ներշնչել սեր գեպի և կեղեցին և գեպի հոգևոր ասպարեզը։ Մակար կաթողիկոսի գերագույն բազծանքի իրագործումը՝ կուսակրոն հոգեորականների պատրաստման գործը երբ չէր հաջողված, «Այդ նպատակն ալ Օրմանյանի հանձնվեցավ, ոս հաջողեցավ 1888 հունիս 15-ին տեսուչ նահապետյան և Ճեմարանի ընթացավարտներն ըստ շորաց կաթողիկոսին ներկայել ուժությունին հայտնելու և օրհնությունը ընդունելու»⁸։

Օրմանյան սրբազնի այս գործունեության մասին պատմում է նաև մեր երջանկահիշատակ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը, որի վրա ևս ազդեցություն է ունեցել Օրմանյանը։ Նա միշտ իր խոսակցության մեջ պարծանքով էր հիշում Օրմանյանին և պատիվ էր համարում Օրմանյանին աշակերտած լինելը։ Հանգուցյալը պատմում էր, որ Օրմանյանը սեր արթնացրեց գեպի հայրենի բազմագույշն պատմություն ունեցող Եկեղեցին։ Այդ վկայում է նաև Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի նամակը. «Եյսպես թե այնպես մենք բարոյական մեծ պարտականություն զգացինք այդպես վարվելու, և մի քանի շաբաթ շարունակ գտնվում էինք ոգերության ու երիտասարդական վառ երևակայությունների մի այնպիսի շամանդաղի մեջ, որին մատչելի չէ ոչ մի հաշիվ, ոչ մի կողմնակի մտածում։ Հարկավ մեզ հետ ոգերոված էին ու շատ ուրախացած մեր տեսուշը (Ա. Նահապետյան), մեր ուսուցիչները, երջանկահիշատակ Հայրապետը, ամեն երեկո Օրմանյան սրբազնի շորջը բոլորած՝ ծրագրներ էինք կազմում ապագայի համար, թե ինչպես պետք է շարունակենք եկեղեցական ու հայագիտական հրահանգություններ և ուսումնասիրություններ, ինչպես պետք է մի նոր միաբանության սկիզբը դնենք»⁹։

Կարապետ Տեր-Մկրտչյանը և նրա ընկերները խոստում են տալիս ու պատրաստություն տեսնում սարկավագ ձեռնադրվելու, սակայն հարկից ապատվելու համար անսպասելի կերպով նրանք մեկնում են իրենց ծննդ-

դավայրը՝ վերադառնալու մտադրությամբ, և ձեռնադրությունը հետաձգվում է։ Օրմանյան սրբազնը հենց այդ ժամանակ հնուցվում է էջմիածնից։

«Էջմիածնի մեջ, — գրում է Օրմանյանը իր մասին, — յուդ ցանած կրոնագիտական և եկեղեցասիրական սերմերը տակավ աճեցան, Ճեմարանի ծրագրին մեջ հաստատվեցան աստվածաբանական ուսուցումները, Օրմանյանի սերկալացած հինգ ընծայացուներեն թնդես երեքը պարագաներեն վշտանալով ևս բաշվեցան, բայց Ա. Նահապետյան տեսուչ և Տ. Տեր-Մկրտչյան ընթացավարտ ձեռնադրություն ստացան և հետևողներ ունեցան մյուս լսարաններն, որոնք Գերմանիո համալսարանաց մեջ ալ կատարելագործվեցան, և Ճեմարանական ընթացավարտ վարդապետներու ընտիր խումբ մը կազմվեցավ Մայր Աթոռի մեջ»¹⁰։

Օրմանյան սրբազնը ինչու է անտեսել այն իրողությունը, որ սարկավագ են ձեռնադրվել բացի տեսուչ Արշակ Նահապետյանից և ընթացավարտ Կ. Տեր-Մկրտչյանից, նաև Գևորգ Զորեքչյանը և Գարեգին Հովսեփյանը։ «Արարտառ-ը այդ մասին գրում է. «Ամսուց 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցան ի վաղուց ցանկալի ձեռնադրությունը Ա. Գայանեի վանքում՝ սրբագրոծությամբ զեր. Ներսես եպիսկոպոսի Ա. Էջմիածնի Ճեմարանը հընդեմատանայից երկունքից հաքը ի վերջո տվեց երախայրիքը Հայ Եկեղեցուն և ազգին։ 17-ին առավոտյան սարկավագության աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծահարգ Արշակ Նահապետյան և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գևորգ Զորեքչյան ու երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյանը»¹¹։

Մեկ տարվա արդյունքները, ինչպես տեսանք, մեծ էին։

Սառը տալիս ենք Օրմանյանի՝ Ծովաստանից բռնի վտարմանը վերաբերող նորահայտ փաստաթղթերը։

8. «Ազգապատում» հատոր Գ, էջ 4584։

9. Երվանդ Տեր-Մինասյան, «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան», Մոսկվա, 1911 թ., էջ 7—8։

10. «Ազգապատում», հատոր Գ, էջ 4582—4583։

11. «Արարտառ», 1889 թ., էջ 353։ — «Էջմիածնին», 1954 թ., Խ 3, էջ 28։

ԹԱՎԱՐԱՎԱԿԱՆ ՄԱՍԻ

ԳԱՅԱՎԱՐ ԳԵՏ

ԿՈՎԱԼՈՎԻՄ

20 տարի 1888 թ.

Ա 187

ՆՈՐԻՆ ՊԱՅՉԱԽՈՍՓԱՅՅԱԽԹՅՈՒՆԻ ԿԱՐՈ Գ. Ա. ՏԱՌՈՅՑՅԱՆ

Ողորմած տե՛ր, կուս Գմբարի Անդրեևիչ:

Անցյալ մարտի 8-ի N 212 նամակում Ձերդ Պայծառափառությունը Սրմանյան հայիսկությունը է Հայորդիկ իմ վերջական եզրակացությունը Օրմանյան հայիսկությունը Թյուրքիա Հնացանելու և Հայ լուսավորչական գավանության պատկանող էջմիածնի Հոգենը գարանցների կանոնադրությունները կառավարության հաստատմանը ներկայացնելու ասթիվ:

Գեկավարվելով Հնաց նույն նկատառություն, որ ձեզ Հաճու է հզեւ Հայորդի ինձ, թե ցանկալի է մեր կողմից բարի Հարարերություններ պահպանությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ, ևս ավագ գեղքությունը էլ իմ պարարք Համարեցի մի անգամ ևս մատանշնչել նորին Վեհափառությանը, որ ծագած թյուրքացությանը հարավոր է Հանդիսան և խաղաղ լուծում տալ կառավարության պահանջը նրա կողմից կամավորապես կատարելու միջոցով:

Լիովին վստա՞ն լինելով, որ Պատրիարքին հղած միանդայն անկեղծ և բարի ցանկություններով լի իմ նամակը (որի պատճենը սպառակար և Համարում ընդ սմին ուղարկել), բարերար ազգեցություն կունենա, ինձ ավելի բան զարժմացքեց—անախորդություն պատճառեց նորին Վեհափառության պատասխան նամակը (նույնպես սրան կցված), որի մեջ, ձեզվածի և Հեղ միջնորդի բոլիք տակ նա ցուցարերում է Համառություն և աներկյուղ պատրաստվում է պահանջների դեմ վստա՞ն լինելով, ըստ երեւյթին, զրա Հաշողության:

Օրմանյան հայիսկուղոսի նկատմամբ իր պահանջների բավարարման Համար որպես Հիմք Պատրիարքը Հայտարարում է երկու փաստարկ. առաջինը՝ Կոստանդնուպոլիսի մեր դեսպանի միջոցով Արտաքին գործերի մինիստրության կողմից իբր տրված թույլտվությունն է և երկրորդը՝ նրա պաշտոնակատար նախորդ Հանդիսացյալ Գեորգ Պատրիարքի օրինակը:

Սակայն Հիմնվելով բազմաթիվ այն գեպերի վրա, ըստ որում Հայ Հոգևոր բարձր աստիճանավորները յուրահատուկ կերպով են հասկացել կամ, ավելի շուտ, դիտավորյալ խեղաթյուրել են որոշ փաստեր, ևս այժմ ևս Հակամատ ևմ ևնթաղեկու, որ Օրմանյանի՝ Ռուսաստան մտնելու Համար միայն մեր Արտաքին գործերի մինստրության կողմից տրված Համաձայնությանը,— որի Համար, մերեւ, Հնաց ինքը Օրմանյանը կամ, մինչև իսկ Պատրիարքն է ինդրեւ՝ առանց զալու փոկական պատճառը բացարելու, — նորին Վեհափառությունը տալիս է այնպիսի նշանակություն, թե իբր, Օրմանյանին տրված է միանդայն օրինական թույլտվություն էջմիածնի Ճեմարան պաշտոնի ըրավիրվելու համար:

Ընդ սմին Պատրիարքի Հետագա վկայակուղումները, որ նա բերում է որպես Օրմանյանի գործի վերաբերմամբ իր գործողությունների օրինականության և օգագարության արդարացում, հակասում են Ճշմարտությանը. Նորին Վեհափառությանը պետք է շատ լավ հայտնի լինի, որ Հանգուցյալ Գեորգ Պատրիարքի կողմից Ճեմարանում պաշտոնավարելու համար Թյուրքիայից Հոգորականներ հրավիրելու գեպերը, առանց որևէ, իբր, արգելքի հանդիպե-

լու մեր բաղաքացիական փշխանությունների կողմից, եղել են իրոք ծալքահեղ կամայականության և օրենքի խախտման այն արտահայտություններից մեկը այդ Պատրիարքի կողմից, որի գեմ մեր կառավարությունը բաղմից բողոքել է, թեպես ցալոր սրտի, ապարդյուն կերպով:

Սակայն, եթե ինձ բոլորովին անհայտ Արտաքին գործերի մինիստրության վերոհիշյալ թուլլտվությունը իսկապես կարող է մեկնարանվել Օրմանյանին ձեմարանում՝ պաշտոնավարելու թուլլտվության իմաստով, ապա, զործը հարթելու նպատակով, մնում էր, թերևս, խնդրել բարձրագույն բարեհաճությունը՝ Պատրիարքի միջնորդությունը բավարարելու համար, վերապահում անելով, որ այդ արվում է որպես հատուկ բացառություն և անհրաժեշտ պայմանով, որպեսզի Օրմանյանը ուսական հպատակություն ընդունի:

Բայց ընդ սմին ևս չեմ կարող շմատնանշել Օրմանյանի անբասիրության վերաբերմամբ նորին Վեհափառության հավաստիացման առթիվ, որ Պատրիարքին հայտնի են այդ հոգեռականի հակակառավարական գործունեությունը թյուրբիայում և նրա բաղաքական ձգումները, ուստի և Պատրիարքի պնդումներն այն մասին, որ Օրմանյանը նշանակվի երիտասարդ սերնդի դաստիարակության և կրթության ղեկավար էջմիածնի ձեմարանում,—ցուց էն տալիս, թերևս, որ նա ձգում է շեղվել իր հոռի մասին բացառապես հոգեր հոգատարություն ունենալուց և բռնել իր նախորդ Գևորգ Պատրիարքի գործունեության ուղին:

Ես չեմ կարող ընդ սմին Զերդ Պայծառափայլության ուշադրությունը շնորհիրել Պատրիարքի կողմից ինձ ուղղված նամակի եղբափակիչ խոսքերի վրա, որոնք, կարծես, մատնանշում են շափազանց կարեոր, և, թերևս, ցավալի այն հետեւանքները, որ կարող են ստացվել նրա խնդրանքը չկատարելու պարագայում, հավասարապես նաև բոլորովին լուսվյուն պահպանելը կառավարության այն պահանջի մասին, որը վերաբերում է ձեմարանի և թեմական դպրոցների կանոնագրությունը ներկայացնելուն, լուսվյուն, որը, ինչպես ինձ թվում է, դիասկորչակ բռնվյթ ունի՝ նա սպասում է Պատրիարքի ներկայացրած ապօրինի պահանջների կատարման ելքին:

Իմ կողմից ընդունելով, որ ավյալ գործում Պատրիարք-Կաթողիկոսի ապօրինի պահանջին զիջելը կարող է ծառայել միայն որպես անցանկանալի միջազեպ, որի տրամարանական հետեւանքը կ'անդիսանա՝ որպես անհրաժեշտություն հետազայտում ևս զիջումներ անելու ավելի կարեոր հարցերում, քան այս կամ այն անձին էջմիածնի ձեմարանում պաշտոնի նշանակելը, ինչպես, օրինակ՝ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերյալ միջնակարգ ուսումնական հաստատություններում կրոնը ուսաց լեզվով դասավանդելու վերաբերյալ հարցերում և այլն, ես անհրաժեշտ եմ գտնում դիմել Պատրիարք-Կաթողիկոսին կառավարության պահանջներին ենթարկելու այն միջոցներին, որոնք Զերդ Պայծառափայլությանը հանու է եղել հաղորդել իմ նախնական եղբակացության առթիվ։ Համառ պահանջը այս հարցում, որը վերաբերում է օրենքով սահմանված կարգի կատարմանը, կհամոզեր Ամենայն Հայոց Մայրաքույն Պատրիարքին այն բանում, որ կառավարությունը, պատրաստ լինելով իրենից կախված բոլոր միջոցներով աշակեցելու նորին Վեհափառության բարի գործերին ու ձեռնարկումներին՝ նրան վստահված հոտի մասին հոգեռը հոգատարության սահմաններում,—միևնույն ժամանակ թույլ չի տա ապագայում կրկնել այն ապօրինի գործունեությունը, որով իրենց նշանափորեցին նորին Վեհափառության պաշտոնակատար նախորդները։

Վերեսում շարադրվածքը ներկայացնելով Զերդ Պայծառափալլության բարհնայիցողոթյանը, ևս, որպես եզրակացություն, իմ պարտքն եմ համարում հայտարարել. 1) որ, ինչպիս կրաքի՞ճաներ նվասել, իմ կողմից ձեռք են առնելով բոլոր միջոցները գործը հանդիս է կրապով հարթելու համար, միջոցներ, որոնք, ցավոք սրտի, բարինպաստ արդյունքի շհանգիցրին. 2) որ այսուհետեւ հարկադիր միջոցները ձեռք առնելով կարող է առաջ բերել հայ բնակչության մեջ մարքերի որոշ խմբում, իշարկե ամենենին է, ոչ վահանգամբոր և խոռվաթյուն հայ հոգեորականության մեջ, զիսավորապես, էջմիածնում, որի հետեւանքը կարող է լինել Մակար Պատրիարքի համեմարծակի մեկնումը Խոռվատանի սահմաններից զուրս, կամ հրաժարումն իր գրաված բարձր պաշտոնից և 3) որ բարձրագույն ցուցումներն ի կատար ածելու համար, որոնք կիսնդրարկիմն Զեր կողմից, ևս օգտակար կհամարեի Պետերբուրգից գործուղել միանգամայն ձեռնհաս, բարձր դիրք ունեցող մի անձնավորություն, որն օժագած լինի բավականաշատ լիազորություններով՝ հարկ եղած դեպքում Պատրիարքի և նրան շրջապատող խորհրդականների վրա պատկանելի ազդեցություն գործելու համար:

Խնդրում եմ Զեր, կոմս, բնդունե՛ր խորին հարգանաց համաստիքը և նույնպես նվիրվածությունը:

ԽԵԽԱՆ ԴԱՆԴԻՈՒԿՈՎ ԿՈԲՍԱԿՈՎ

(ՍՍԾՄ Կենարունական պետական պատմական արխիվ Լենինգրադում,

ֆոնդ 821, գալկրադիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 1-5)

ԿՈՎԿԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻԿԱՆ ՄԱՍԻ ԳԱԽԱՎՈՐ ՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԱՄԵԽԱՅԻ ՀԱՅՈՅ ՄԱԿԱՐ ՄԱՅՐՈՒԹՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք-ԿԱՓՈՊԱԿՈՍԻՆ
ՈՒՂՂԱԸ 1888 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԵՆՔ

Առաջն տարվա հունվարի 2-ի № 16 նամակում մանրամասնորին հաղորդելով այն հանգամանքների մասին, որոնք ինձ զրգեցին առաջարկություն անել էջմիածնի Մինողին (1887 թ. հոկտեմբերի 13, № 8986) հեռացնելու Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանին, որը թյուրբիալից հրավիրվել է էջմիածնի Հոգեոր ճեմարանում աստվածաբանական գիտություններ ավանդելու համար, ևս վստահություն եմ հայոնել, որ նշված դրդումների պատճառով Զերդ Վեհափառությունը իր կողմից էլ կրաքի՞ճանի ընդունել Օրմանյան եպիսկոպոսի անհապաղ թյուրբիա վերադառնալու անհրաժեշտությունը, որի մասին ես, դրա հետ միասին և խնդրել եմ շմերժել պատշաճ կարգադրություն անել:

Սակայն իմ ստացած տեղեկություններից պարզվում է, որ Օրմանյան եպիսկոպոսը տակալին մնում է էջմիածնում որպես հիշյալ ճեմարանի դաստուս Մինչդեռ ներքին գործերի մինհստրությունը տեղեկանալով, որ իմ հիշյալ նամակից Զերդ Վեհափառությանը հայտնի Օրմանյանին հեռացնելու վերաբերյալ կարգադրությունը մինչև այժմ չի կատարված, նկատի ունի, հետագա շեղումների դեպքում դիմել կարուկ միջոցների մինհստրության օրինական պահանջների կատարման համար:

Անկախ դրանից, մինհստրությունը նաև մտադիր է առ ոտոս թագավոր Կայսեր ներկայացնել և նրա բարձրագույն հայեցողությանը թողնել հայ լուսավորչական գերատեսչությանը ևնթակա էջմիածնի ճեմարանի և թեմական դպրոցների կանոնադրությունները կառավարության հաստատմանը ներկայացնելու գործում շարունակվող ձգձգումները:

Սակայն նախքան վերոգրյալ երկու հարցերի վերաբերմամբ որևէ միջոց ձեռնարկելը մինիստրությունը խնդրում է իմ վերջնական կարծիքը դրանց նկատմամբ:

Չերդ Վեհափառությանը հայտնի է, թե ես որպիսի անկեղծությամբ եմ ընդունում Չեր բարեկամական բարեհաճության զգացմունքների արտահայտությունն իմ նկատմամբ, որոնք ամեն անգամ ինձ իսկական հաճույք են պատճենել, որը և գրդում է ինձ այժմ և մի առանձին պատրաստակամությամբ տրամադրվել հանդիսա և բարեհաշող լուծում տալու առաջացող դժվարություններին: Այդ նկատառումներով ես շտապեցի մինիստրությանը հազորդել ինձնից սպասվող կարծիքը և իմ բարոյական պարտականությունն եմ համարում նախապես ծանուցանել Չեր այդ մասին և խնդրել Չերդ Վեհափառությանը՝ շղանաք Չեր կարգադրությամբ կանխել խիստ անցանկալի միջոցի ձեռնարկումը Օրմանյան Խալիսկոպոսին հեռացնելու վերաբերմամբ և հավասարապես կարգադրել շտապեցնել Հաղորդումը Հոգեկոր ուսումնական հաստատությունների ծրագրերի մասին հետագա ընթացք տալու համար:

Այսուհետեւ, ինչ վերաբերում է այն առարկաներին, որոնք շարադրված են անցյալ տարվա փետրվարի 27-ի և մարտի 21-ի №№ 105 և 151 ասություններում և որոնք վերաբերում են կառավարական ուսումնական հաստատություններում կրոնի դասավանդմանը և եկեղեցական-ծխական դպրոցներին, ապա Պետրոգրադում իմ վերջին անգամ եղած ժամանակ ես այդ մասին հարաբերության մեջ մտա ներքին գործերի մինիստրության հետ, որը, իր հերթին, դիմեց ժողովրդական լուսավորության մինիստրությանը:

Այդ գործերի շորջը ծագած հարցերի վերջնական քննությանը ես շկարողաց սպասել Պետերբուրգում, բայց, կարծում եմ, քննությունը շի ուշանա և որոշ վստահացումներ ունեմ այն մասին, որ ներքին գործերի մինիստրությունը ցանկանում է այդ հարցերը լուծել-վերջացնել լիովին բարենպաստերպով՝ համաձայնեցված հիշյալ երկու մինիստրությունների հայացքների, հավասարապես և Չերդ Վեհափառության և իմ ցանկությունների հետ:

Հուսալով ամենակարճ ժամանակում ստանալ ծանուցում իմ սույն նամակին և ապամինելով Չեր սուրբ աղոթքներին ու ամենախորին հարգանքի և մշտական նվիրվածության զգացմունքով պատիվ ունեմ լինելու Չերդ Վեհափառության՝

Ստորագրեց՝ «ամենախոնարհ ծառա» Իշխան Գոնդուկով Առասակով:
Ճիշտ է՝ Գործավար (ստորագրություն):

(ՍՍՌԴ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրադում,
ֆոնդ 821, վավերագիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 6—7)

Ներքին գործերի ՄԻՒՍԻ ԱՄԵՆԱՀՊԱՏԱԿ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԳԱՂՏՆԻ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԳԻՐՍԻՆ ԷԶՄԻԱՄԻՆ ԳՈՐԾՈՒԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ

Խակականի վրա նորին Կայսերական Մեծության սեփական ձեռնով գրված է. «Համաձայն եմ»:
Խակականի վեա պ. մինիստրի ձեռնով գրված է. «Համաձայն եմ: 14 մայիսի: Տոկոս»:

Կովկասում քաղաքացիական մասի զիսավոր պետը, կառավարության և Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի միջն վերջերս ծագած հականառությունների կապակցությամբ, անհրաժեշտ է գտնում ներքին գործերի մինիստրության կողմից հավասարմատար անձ գործուղել Պատրիարքի հետ բանավոր

բացարարությունների մեջ մտնելու այն հարցերի շուրջը, որոնք առիթ են ավել հիշյալ հակածառարություններին:

Այդ հարցերից ամենակարևորներն են.

1. Կովկասի կառավարական միջնակարգ դպրոցական հաստատություններում հայերին կրոնը ուսուաց լեզվով դասավանդելու մասին:

2. Հայկական եկեղեցական-ծխական դպրոցներում դասավանդման վրա կառավարական հսկողություն ունենալու մասին:

3. Էջմիածնի Հոգեոր Ճեմարանի և Կովկասի Հայկական թեմական դպրոցների ծրագրերը կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին:

4. Թյուրբահպատակ Օրմանյան եպիսկոպոսին Էջմիածնի Հոգեոր Ճեմարանում դասավանդումը Պատրիարքի կողմից առաջինի կերպով թույլտրվելու մասին:

Իմ կողմից հս առավել նպասակահարժար դանելով, զրագրության փոխարեն, որը բավարար արգյունքների չհանդեցրեց, կառավարության հայացքների անձնական պարզաբանումը և Պատրիարքին ներկայացված օրինական պահանջների կատարման անհրաժեշտությունը նրան ներշնչելը, նաև նկատի առնելով այդ նպասակի համար ահեղական վարշավանդաներից որևէ մեկին նշանակելու անհրաժեշտությունը, ևս կենթաղրեի սույն հանձնարարությունը զնել երկարատև պաշտոնական փորձառությամբ հայտնի ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ՝ գաղտնի խորհրդական Գիրսի վրա, նրան օգնելու համար նշանակելով օտար դավանությունների Հոգեոր գործերի դեպարտամենտի կրտսեր աստիճանավորներից մեկին:

Վերեւում շարադրած իմ ենթագրությունները ներկայացնելով Զերդ Կայսերական մեծության բարեհայեցողությանը, դրանք հավանություն գտնելու դեպքում ևս ամենահպատակ իմ պարտքն ևմ համարում թույլտվություն հայցել րաց թողնելու գործուղվող անձանց հանապահածախսերը ծածկելու համար զաղտնի խորհրդական Գիրսին 3.000 ոռութի և նրան առնթեր աստիճանավորին 1.000 ոռութի, սույն ծախսը վերապրելով Կոստանդնուպոլսում Էջմիածնի պատրիարքական դահի փոխանորդություն հիմնելու նպատակով կատարված հատկացուներից գոյացած դրամագլուխի տոկոսների հաշվին, որոնք, 1882 թվականի զեկունմբերի 21-ի բարձրագույն հրամանի հիման վրա, դրված են ներքին գործերի մինիստրի տրամադրության ներքո՝ Հայ Լուսավորչական Եկեղեցու կարիքների բավարարման համար:

13 մայիսի 1888 թ.

Ստորագրեց՝ Կոմս Դմիտրի Տոլստոյ:

Ճիշտ է՝ Բաժանմունքի պիտ (ստորագրություն):

(ՍՈՒՆԴ ԿԵՆԱՐՈՒՆԱԿԱՆ պիտական պատմական արխիվ Անդինություն,

Քոնդ 821, վավերագիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 11—12):

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐ ԳԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԴԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ
ԳԵՊԱՐՏԱՄԵՆՏ

16 մայիսի 1888 թ.

Սույն թվականի մայիսի 14-ին բարձրագույնս հաստատված՝ ներքին գործերի պ. մինիստրի ամենահպատակ զեկուցագրի համաձայն գործուղվում է էջմիածնի Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի հևտ բանակցություններ վարելու համար մինիստրի խորհրդի անդամ՝ զաղանի խորհրդական Գիրսը, ընդորում նրան օգնություն ցույց տալու համար նշանակվելու է ինձ հանձնված դեպարտամենտի կրտսեր աստիճանավորներից մեկը:

Ուստի, մտադրություն ունենալով մատնանշված նորատակի համար նշանակել հիշյալ գեպարտամենտի սեղանավարիչի օգնականի՝ կամեր-յունկերի կոչումով օժտված, տիտղոսավոր խորհրդական իշխան Ռոբուսովին, պատիվ ունեմ սույնի համար հայցելու Զերդ Պայծառափայլության թույլտվությունը:

Դիրեկտոր (ստորագրություն):

(ՍՍԸՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրագում,
Փող, 821, վավերագիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 13):

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐ ԳԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԴԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ
ԳԵՊԱՐՏԱՄԵՆՏ

18 մայիսի 1888 թ.

№ 13

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԽՈՐԾՈՒ ԱՆԴԱՄ
ԳԱՂՏՆԻ ԽՈՐԾՈՒԱԿԱՆ Պ. ԳԻՐՍԻՆ

Բագավոր Կայսրը, ըստ ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցագրի, սույն ամսի 14-ին բարձրագույնս բարեհաճեց Զերդ Գերազանցությանը գործուղելու էջմիածնին՝ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսին անձամբ պարզաբանելու համար կառավարության հայացքներն այն հարցերի նկատմամբ, որոնք առիթ են տվել կառավարության և նորին Վեհափառության միջև հականառությունների, և նրան ներշնչելու համար, որ անհրաժեշտ է իրեն ներկայացված օրինական պահանջները կատարել. ընդ սմին Զեղ օգնություն ցույց տալու համար նշանակվում է օտար գավանությունների Հոգևոր գործերի դեպարտամենտի կրտսեր աստիճանավորներից մեկը և Զերդ Գերազանցությանը վճարվելու է ճանապարհածախանք ծածկելու համար 3.000 ռուբլի, և Զեղ առընթեր աստիճանավորին 1.000 ռուբլի, սույն ծախսը վերագրելով այն դրամագիսի ½-ի հաշվին, որը գոյացել է Կոստանդնուպոլսում էջմիածնի պատրիարքական գահի փոխանորդություն հիմնելու նպատակով կատարվող հատկացումներից:

Ի կատարումն բարձրագույն այդ կամքի, պատիվ ունեմ խոնարհաբար խմբելու Զերդ Գերազանցությանը մեկնել էջմիածնին, ընդ սմին ավելացնե-

լով, որ օդնությամ համար Զեկ առընթեր նշանակված է արքունիքի կամեր-յունկեր, տիազսսավոր խորհրդական իշխան Ռեգուսովը, և որ արժմ և նիմ կարգադրություններ են արված սոնկաթերթը և նշված գումարը Զերդ Գերազանցությանը հանձնելու մասին:

Ի տեղի ներբին գործերի մինիստրի՝ մինիստրի օդնական Կազարին:
Գիրեկար (ստորագրություն):

(ՍՍԾՆ ԿԱՆՏՐՈՆԱԿԱՆ պետական պատմական արքիով ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՅ,
ֆոնդ 821, վավերագիր 138, 1888 թ., հ. 103, թ. 18):

ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ Պ. ՄԻՆԻՍՏՐԻՆ ԵՐԵՎԱՆԻՑ ՄԱԿԱՎՈՐ (ՄԻԱՅ. Յ. Ա. Պ. Ա.)
ՈՒՂԱՐԿԱՎԱՐ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀԾԻԱԿԱՆ ԳԻՐՍԻ ՀԵԽԱԳՐԻ ՊԱՏՃԵՆՔԻ

Փակված ծխական դպրոցները բացվել են Պատրիարքի շանրերով 1888 մվականի կանոնների ճշգրիտ հիման վրա: Դրանց կիրառման ժամանակ թւուրիմացություններ են ծագել հոգաբարձուի և Պատրիարքի միջև: Դրանք հեշտությամբ կարող են պարզաբանվել սովորական կարգով, որ և խնդրում է Պատրիարքը: Մանրամասնությունները՝ հաշվեալվության մեջ, Պատրիարքի բոլոր պահանջները կատարված են: Օրմանական և պիսկոպոսին Պատրիարքն արտաքսում է Բուտաստանի սահմաններից: Պատրիարքը խնդրում է զեկուցել Զերդ Պայծառափայլությանը, որ ինքը թեսեա պատրաստ է անհապաղ ձեռնամուխ լինել Ճեմարանի և թեմական դպրոցների կանոնադրությունները կազմելուն, բայց միայնակ արժմ այդ անել ի վիճակի չէ, վասնզի Ճեմարանի և թեմական դպրոցների ուժերը ներկայումս բացակա են: Արձակուրդները վերշանալուն պես անհապաղ ձեռնամուխ կլինի կանոնադրությունները կազմելուն:

(Ստորագր.՝) Գիրս:

ԽԵՐՔԻՆ ԳՈՒՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՊԱՏՃԵՆՔԱՆԵՐ ԿԱՂՏՆԻ ԽՈՐՀԾԻԱԿԱՆ
ԳԻՐՍԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ

Խիստ շնորհապարտ եմ հեռագրի համար: Վստա՞՛ եմ, որ Պատրիարքի կողմից ցանկություն լինելու դեպքում, կառավարությանը աշակեցելու Հայոց Եկեղեցու բարօրության համար և Զերդ կողմից օժանդակություն ցույց տրվելու պարագայում ծագած բոլոր թյուրիմացությունները կհարթվեն: Ննդություն կրե՛ք նորին Վեհափառությանը հաղորդել իմ խորին հարգանքը:

Փ. Մակովս

Շիշտ է՝ Իշխան Մ. Կ. Ա.

29 Հունիսի 1888 թ.

(ՍՍԾՆ ԿԱՆՏՐՈՆԱԿԱՆ պետական պատմական արքիով ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՅ,
ֆոնդ 821, վավերագիր 138, 1888 թ., գործ հ. 103, թ. 24, 25):

